Պարույր Սևակ

Սխալ խոսք սխալի մասին

Գժվել է գարունը:
Եվ օդը գինով է:
Եվ լույսի՛ց, լոկ լույսի՛ց կարող է մայրանալ,
Կարող է մայրանալ... մինչևիսկ չքե՛ղը:
Մինչդեռ ես կրում եմ ուժից վեր այս բեռը՝
Իմ գլխի՛ և սրտի՛ այս բեռը,
Որի տակ
Ինձանձև մարմինըս քարշում եմ ութանձև:
Քարշում եմ:
Չե՛մ խորհում:
Եվ դա իմ խորհելն է:
Չե՛մ լսում:
Չե՛մ ուզում ընդունել ո՛չ մի ձայն:
Բայց անվերջ լսվում է, թե՛ իմ մեջ, թե՛ իմ շուրջ.
«Ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է»:
...Ինչ-որ բան սխալ է հենց Երկրի առանցքում,
Որ ուղի՛ղ չի անցնում, այլ ինչ-որ թեքությա՛մբ:
Ինչ-որ բան սխալ է մինչևիսկ լույսի՛ մեջ,
Որ պիտի՛ ունենար ծանրություն ու կշիռ:
Թե կրոնն է սխալ՝ այդ վաղո՛ւց հայտնի է,
Բայց մի տեղ սխալ չէ՞ և հավա՛տ կոչվածը:

Ինչ-որ բան սխալ է ճշմարտի մեջ անգամ,
Եվ ստույգ կոչվածն է ստուգվել աղերսում:
Ինչ-որ բան սխալ է և արյա՛ն,արյա՛ն մեջ.
Չհեղվե՛ր, հեղվելիս ինչո՞ւ է մակարդվում:
Թե ձեռքն է գավաթին երկարվում հուսահատ՝
Սխալ է և գինի՛ն.
Չի ՛ խցվում կոկորդում:
Սխալ են ջրե՛րն էլ,
Հոսում են վերից վա՛ր,
Վերից վա՛ր,
Վերից վա՛ր՝
Անընդհատ անկում է:
Կոշկատակն է սխալ.
Հողից է մեզ կտրում:
Սխալ է և հողը.
Առնըվում-ծախվում է:
Սխալ է կրակն էլ.
Ինչի՞ս է մխալը:
Լռությունն է սխալ.
Մեր թևերն է փետրում:
Իսկ անկե՛ղծ խոսելը... սխալ ու սխա՛լ է:
Իսկ ի՞նչն է տարբերում և ի՞նչն է անջատում
Փակուղի ասվածից հորիզոն կոչվածը,
Եթե սա՝ ոտքերրդ, նա աչքերդ է հատում:
Սխալ է ջարդելը,
Բայց չէ՞ որ դրանից
Երկրաչափն է կարծեմ օգտըվում արանքում.
Ձևերն են բազմանում այդ ջարդում-փշրումից:
Սխալ կա թերևըս և նրա՛նց արարքում,
Որ անկեղծ ձգտում են շտկելու սխալը

Եվ ամեն մի սխալ շտկելիս, ակամա,
Գործում են նո՛ր սխալ,
Սխալ է ձգտո՛ւմը:
Ինչ-որ բան, ու լո՛ւրջ բան, անկասկա՛ծ, սխալ է
Եվ մարդուս մարմնի մեջ,
Մի գլխով ի՞նչ անել,
Երբ այսքա՛ն դժվար է անսխալ ապրելը...
Հետո ի՞նչ դուրս եկավ,
Սխալ է ատե՛լը
Սխալ է սիրե՛լը,
Այրվե՛լը,
Մխա՛լը:
Սխալ է , անկասկա՛ծ, և այսպես դատելը
Ուստի և այս երգը... սխալի՛ց սխալ է...

19,20.V.1961թ. 25.VII.1961թ. 22.IX.1961թ. 10.X.1961թ.
Երևան